

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 7 ՍԵՊՏ., 1929

ԹԻԻ 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՅԾԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՎԻՇՏԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

ԹՐԳՄ. ՏԻԿ. Ե. ԱՇՃԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԷՆ ՀՈԳԵՒՈՐ ՄԹՆՈՂՈՐՏԸ

ՎԵՐ. ՅԿԲ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԱԻԵՏ. ՇԱՐԺՈՒՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

ՎԵՐ. Ս. ԱՂՊԱՊԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԱՐՋԱԳԱՆԳ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

«ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ» ՀԱՂԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, կրթական զիտական պարբերաթերթ.
Արտօնատէր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան
Տնօրէն—Խմբագիր Տ. Ճ. Խրլոբեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրիա, տարեկան 1.50 Սուրիական ոսկի:
Արտասահման, տարեկան 1.50 տուլար:

ՓՈԽԱՆ ԸՆԿԱԼԱԳՐԻ

(ի հաշիւ 1929 ի բաժնեգնին)

Վեր. Կ. Հասէսեան, Պէյրութ, 4. 50
սուր. ոսկի, Պատ. Յ. Կիւրլէքեան, Է.
քիզ-Օլուզ, 431. 25 զրշ. արծթ. Պատ.
Պ. Թիւթիւնճեան, Գալատուրան, 75 զրշ.
արծթ, Պատ. Կ. Թումանեան, Գըրըզ-
խան, 1. 50 սուր. ոսկի, Պատ. Հ. Ղա-
զարեան, Ճուշի, 6. 00 սուր. ոսկի,
Տիկ. Մարիամ Վարդանեան, Լաթաքիա,
1. 50 սուր. ոսկի, Miss E. S. Webb,
Պէյրութ, 10. 00 սուր. ոսկի, Տիկ. Ս.
Խաչերեան, (ի հաշիւ Mrs. Y. Cutler ի)
Լօս-Անճէլս, 1. 50 տուլար, Ատամնա-
Տիար Գր. Սարգիսեան, Հալէպ, 3. 00
սուր. ոսկի և 21. 25 զրշ. արծթ, Տիար
Ա. Սընդզճեան, Պէյրութ, 13. 50 սուր.
ոսկի:

(7)

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Կը փնտռուի բնիկ Արարկիրցի Վար-
դանուշ՝ ծնեալ Տէր Յովհաննէսեանը,
այժմ իբր 30 տարեկան, մօր կողմանէ
Տէր Ղևոնդի թոռ, իսկ հօր կողմանէ՝
Տէր Յովհաննէսեաններէն:

Փնտռողն է՝ իր մեծ եղբայրը Յոհան-
նէս Տէր Յովհաննէսեանը, նոյնպէս Ա-
րարկիրցի, այժմ իբր 33 տարեկան:

Կը խնդրուի տեղեկացնել՝ առ,—

J. Bulla,
21, Rue Poriaz,
Pangalti,
Istanbul
(Turquie)

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 7 ՍԵՊՏ., 1929

ԹԻԻ 18

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՅԾԵՐ

ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ

Ի՞նչ է տարեկան գումարումներու օգուտը: Հետեւեալ կէտերը կրնան յիշուիլ իբր պատասխան այս հարցումին:

1. Այս ժողովները մեր մէջ շնորհակալութեան զգացում մը կ'արթնցնեն: Մեծ Պատերազմէն առաջ Քէսապի մէջ գումարուող Միութեան ժողովին մէջ կարելի չէղաւ համարձակօրէն արտայայտուիլ, լրտեսի մը ներկայութեանը պատճառաւ: Ասկէ վեց տարի առաջ Հալէպի մէջ Միութեան ժողովը խուսի մը գաղթականներու գումարումն էր միայն: Իսկ այս անգամ Քէսապի մէջ հաւաքուած էին 20 ի չափ եկեղեցիները ներկայացնող հովիւներ, քարոզիչներ և պատուիրակներ, որոնք մօտիկ ըրին յառաջդիմական գործունէութեամբ և յոյսով լեցուն տեղեկագրութիւններու: Ելեմտական տեղեկագրութիւնները թէպէտ կատարելապէս գոհացուցիչ չէին: այսու հանդերձ յայտնի եղաւ որ իւրաքանչիւր աւետարանական անհատ, մանուկները և կիներն ալ հաշուելով, տարեկան մօտաւորապէս քառորդ օսմ. ոսկի վճարած է կրթական, հոգեւոր, և բարեգործական նպատակներու համար: Շնորհակալութեան արժանի են նաեւ կարգ մը եկեղեցիներու մէջ յառաջ եկած արթնութիւնները, Քէսապի մէջ հին բարեկամներու հետ տեսակցութիւնը և նոյնինքն ժողովին նիստերը: Շնորհակալութեան եթէ այս հոգին ծաւալի և

ընդհանրանայ բոլոր եկեղեցիներուն մէջ, որոնք այս ժողովին տեղեկագրութիւնը կը կարդան, ամէնքնիս ալ աւելի քաջալերուած պիտի ըլլանք նոր տարուան գործին համար:

2. Քէսապի մէջ նոր բան մը սորվեցանք: Մեզի համար նոր ելուղը գիւղական եկեղեցիներու գոյութիւնը չէր, որ արդէն մեզի ծանօթ էր, այլ կարգ մը պայմաններու դոյութիւնը, չոր մօտնալու վտանգին մէջ կը գտնուէինք: Նաեւ տեսանք թէ մեր գործիչներուն մեծամասնութիւնը գիւղի քարոզիչներն են, որոնց լուծելիք հարցերը աւելի գիւղական կեանքի կը պատկանին քան թէ քաղաքային: Գիւղական եկեղեցիներու մէջ սակաւաթիւ մարդիկ կան, դրամի պակասութիւնը զգալի է, կղզիացեալ կեանք մը կը տիրէ հոն, դպրոցները նախնական վիճակի մէջ են, ժողովուրդին բաւական մէկ մասը զրիկ կարգալ չի գիտեր, շատեր պարտքի տակ կը հեծեն, ապրուստը շատ ողորմելի, փոքր մանուկները բազմաթիւ են իսկ 10-16 տարեկաններուն թիւը՝ շատ պըզտիկ: Այս դժուարութիւններու գիտակցութիւնը մեր գործին մէջ անկեղծ կարեկցութեան և միութեան ոգի յառաջ բերաւ, որ ժողովին փախումէն վերջ ալ պիտի շարունակէ և բոլոր տարին մեզմէ անբաժան պիտի ըլլայ: Քէսապի թափուր մնացած բնակիչներու համար ամիսը անգամ մը հովիւ մը պիտի երթայ: Գիւղի և քաղաքի եկեղեցիներուն հովիւներուն միջեւ բնակրու փոխանակութեան համար գործնական առաջարկներ եղած են:

3. Պէտք է որ ժողովատեղի մը գլխունի, ուր եկեղեցիներու ներկայացուցիչները իբր մարմին մը կարենան պաշտօնապէս կատարելիք որոշումները ընել: Այս անգամ ժողովատեղին Բէսապ եղաւ ուր Դահրէի Հայ. Աւետ. եկեղեցին պաշտօնապէս Միութեան մէկ անդամը ընտրուեցաւ: Եէնքերու մասին եղած պէտքերը նկատի առնուեցան, և մասնախումբ մը ընտրուեցաւ որ առաջին քայլը առնելու համար շինական պէտքերու մէկ ցանկը պատրաստեց: Մեր նախակրթարաններուն և Կ. Դպրոցներուն համար յանձնախումբեր ընտրուեցան: Բայց թերեւ այս բոլորէն աւելի կարեւոր ըլլալով Միութիւնը որոշեց ընդունիլ Սուրիոյ և Պաղեստինի Միացեալ Միսիօնարական Խորհուրդին անդամակցելու հրաւերը: Միութիւնը իր այս քայլովը միացած եղաւ յիշեալ շրջանին մէջ գործող քրիստոնէական և միսիօնարական շարժումներուն հետ և բաժնուելով 70 տարուայ կղզիացեալ կեանքէն մտած եղաւ աշխարհային կեանքի մը մէջ: Այս որոշումը ինքնին անկարեւոր և փոքր կրնայ երեւնալ, բայց յառաջիկայ տարիներու միջոցին ան կրնայ մեծ արդիւնքներու մէկ պատճառը ըլլալ:

4. Նիստերուն մասնակցողները գիտեն թէ հոգեւոր կերպով ալ օգտուեցանք մեծապէս: Պիտի կրնա՞նք այս հոգեւոր կայծերով հրահրել մեր ներկայացուցած եկեղեցիներն ալ: Ժողովը նըպատակ մը չէ այլ միջոց մը: «Ժողովին վախճանը սկզբնաւորութիւնն է գործին», որուն համար այս ժողովը սարքուած է:

Ճ. Է. ՄԷՐԻՆ

307-ՈՒԱԾՆԵՐ

ՎԻՇՏԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

(Շար. և Վերջ)

Վիշտը մեզի կը ծառայէ նաեւ՝ կտրելով մեզ այս կեանքին կապող բոլոր կապերէն և մեզ մղելով նոր գիւտերու խուզարկութեան: Այս խեղճ մարմինն մէջ բանտուած հոգիին համար անիկա պատահաններ կը բանայ, որ անոնց մէջէն կարենանք գիտիլ յաւիտենականութիւնը, անմահութիւնն ու փառքը: Այս կ'իրականանայ մանաւանդ այն ատեն՝ երբ մեր բարեկամներէն կամ սիրելիներէն մէկը կը կորսնցնենք: Այս երկրային կեանքէն կատարելապէս հրապուրուած կ'ապրինք, իբր թէ ուրիշ բան գոյութիւն ունեցած չըլլար: Մեր աչքերը յառած գէպի մեր ոտքին տակ եղող երկիրը, չենք տեսներ մեր գլխուն վերեւ շողողացող երկինքը: Յանկարծ մեր ամենասիրելիներէն մէկը մեր քովէն կ'առնուի, և առաջին անգամ ըլլալով կ'սկսինք գէպի վեր նայիլ և մեզմէ հեռու, վերը, կեանքի անտեսանելի եւ յաւիտենական իրերուն մէկ նշոյլը գլխուն: Ահա այսպէս, որ կողմէն ալ գիտելու ըլլանք, պիտի տեսնենք որ տառապանքը Աստուծոյ կողմանէ շրջուած ազդարար մըն է մեզ ճշմարտութեան ճամբուն մէջ մղելու համար: Բանաստեղծ մը գրած է թէ Աստուծոյ լուսեղէն մէկ հրեշտակը իր քովը կենալով իրեն ըսած է. «Դուն մութէն անդին գէպի երկինք նայէ, ամէն օրուան փոխուող փայլերէն անդին դիտէ. ցաւը, յոգնութիւնն ու սոսկումը ընդունէ, և թող որ եւ քու քովդ մնամ»: Մեր Աստուծոյ միտքովարիչ է: Ան իր Ս. Գրքին զրեթէ ամէն էջին վրայ սփոփանքի աղբիւրներ դրած ու տառապանքի կրակէն պաշտպանուելու համար հովանիներ պատրաստած է: Գրեթէ ամէն գլխուն սկիզ-

ըն սփոփարար հրեշտակ մը կայնած կը ձայնէ. «Մխիթարեցէք, մխիթարեցէք իմ ժողովուրդս» (Ես. 4. 1): Չկայ Աստուծոյ ուէ մէկ դաւակը շրջապատող խաւար մը, որուն մէջէն Անոր մխիթարութեան շողը իրեն հասնի: Մութ և ամպոտ ձմեռնային օր մը մինչ կիրակի օրը խօսելիք նխթիս մասին կը խորհէի, ամպերու մէջէն յանկարծ արեւի պզտիկ շող մը պատուհանէն ներս թափանցեց: Մէկէն աչքերս վերցուցի և պատին վրայ ծիածանի մէկ մանրանկարը տեսայ: Ասոր պատճառը կ'երեւի թէ ապակիի այն յատկութիւնն էր՝ որուն միջոցաւ լոյսը անոր մէջէն անցաւ եւ զանազան փայլուն գեղեցիկ գոյներ տեսնուեցան պատին վրայ: Նմանապէս սորվելու պատճառ քրիստոնեայի մը կեանքին մէջ չկայ ցաւ մը, կսկիծ մը, խաւար մը որուն մէջէն Տէրը մեզի երկնային լոյս չղրէ: Դժուարութիւնը ասկէ կը ծագի թէ մենք մեր աչքերը Ս. Գրքի մխիթարութեան դէմ կը գոցենք և անոր նայել չենք ուզեր: Ամպերուն կը նայինք և մութի մէջ կը նստինք, և ուշադրութիւն չենք ընծայեր ծիածանի փայլուն երանգներուն, որոնցմով Աստուծոյ մեր կեանքերը կ'ուզէ լուսաւորել:

Պատկերի մը մէջ կին մը ժայռի մը վրայ նստած կը զիտէ փոթորկայոյց ծովուն ալիքները, որոնք իրմէ յափշտակած են իր սրտին է՛ն սիրելի զանձը: Յուսահատ և զառնութեամբ լեցուն դէմքը կարծես թէ քար կտրած է: Իր ետեւը, ուսին վերեւ, իր սուգի սե հագուստին դաշիւու չափ մօտ, հրեշտակ մը կայնած է, որ շատ անուշ կերպով տաւիզ կը զարնէ: Բայց այնպէս կը թուի թէ երբէք չ'զգար այդ հրեշտակին իրեն այդչափ մօտ ըլլալը և չի լսեր այդ երկնային եղանակին և ոչ մէկ ձայնը: Անիկա յուսալքուած և անմխիթար մորմոքով լեցուն կ'ըլլայ, մինչ երկնային մխիթարութիւնը այնքա՛ն մօտ է իրեն:

Նմանապէս Աստուծոյ զաւահներէն շատերը առանց Աստուծային սէրը և կարեկցութիւնը չգալու, առանց մխիթարութեան անուշ եղանակները լսելու խաւարի մէջ կ'ապրին վշտահար, վհատած և մարած վիճակով մը: Մինչդեռ անոնց Տէրը իրենց շատ մօտ է, և երկնային քաղցրագոյն եղանակները իր շնչած օդը լեցուցած են: Մենք շատ պարզ հաւատքի մը կը կարօտինք մեր Հօրը զրկած մխիթարութիւնը տանելու համար, մինչ մեր սիրտերը կտրած և վիշտով լեցուած են: Յիշուի չկայ մխիթարութիւն մը՝ որ հաւասարի կամ նմանի Աստուծոյ անօհման, անփոփոխելի և յաւիտենական սիրոյն սիրտիւն: Եթէ այս ճշմարտութիւնը միայն մեր անձնական փորձառութենէն սորվինք, բոլոր փորձանքներու մէջ ան մեղալիտի քաջալերէ: Բոլոր տիեզերքի վարիչն է Ան, մեզ իր սիրտին մէջ կը կրէ Ան, իբր մեր է՛ն գորգուրտ և քաղցր մէկ յարեկաւր: Նախախնամութեամբ իր բազկանար միայն մեքենական տնօրինութեան կամ բարի եւ իմաստալից օրէնքներու օգտակար և ազգու գործունէութենէն: Այսպէս ըլլալէ աւելի անիկա խորհող, և սիրով հոգացող մեր Հայրն է: Ինքն է որ կը զննէ օրէնքները, որոնք սիրոյ կանոններ են: Ասոնք իր եւ իր զաւակներուն միջեւ խրամներ չեն բանար: Ամէն լաւ կազմուած ընտանիքի մը մէջ կարգ մը կանոններ, սովորութիւններ կան, որոնք երբէք ծնողներու սէրն ու գուրգուրանքը չեն պակսեցներ: Նմանապէս բնական կարգ մը օրէնքներ մեր երկնային Հօր անձնական հոգատարութենէն մեզ չեն զրկեր: Անոր ձեռքերը ամէն բանի մէջ կը գործեն, Անոր մօտերը ծաղկներուն լոյսը և թռչուններուն կերկուտան: Բնութեան մեր տեսած բոլոր տեսարանները, զորոնք մեր Հայրը մեր հաճոյքին համար նկարած է, և բոլոր

օրհնութիւնները, զորոնք ամէն օր իրմէ կ'ստանանք, Անոր կողմանէ մեզի տըրուած նոր յիշատակներ և պատուոյ նշաններ են: Անհաճելի և ցաւալի բաներու համար ճշմարտութիւնը նոյնն է: Մեր Տէրոջ զրկած ցաւերը արտաքինապէս վնասակար կը թուին. բայց Ան մեզ խոր, քաղցր և յաւիտենական սիրով մը կը սիրէ: Մենք չենք կրնար ըմբռնել թէ ասոնք ինչպէ՞ս կը համաձայնին իր սիրոյն հետ: Բայց զիտենք թէ անոնք մեզի պէտք է գան. թէպէտ չենք հասկնար բայց պէտք է հաւատքով համոզուինք թէ առանց տարակոյսի և վախի պէտք է Անոր բոլոր կարգադրութիւններուն յանձնուիլ:

Բանաստեղծ մը սապէս ըսած է. «Եթէ կեանքի գոռը քիչ մը բանալու ըլլանք և ներս նայինք Աստուծոյ գործունէութեան կերպը տեսնելու, այս բոլոր տարակոյսներու և վէճերու բացատրութիւնը եւ բոլոր գաղտնիքներու բանալին պիտի գտնուին մեզի համար:» Հիմա չենք կրնար ընել ասիկա, բայց քիչ վերջը պիտի կրնանք: Նոյնիսկ հիմա խաղաղութիւն պիտի վայելինք եթէ Աստուծոյ իմաստուն եւ յաւիտենական սէրը ճանչնալով հաւատանք եւ Անոր վստահինք: Այս է ճշմարիտ միութարութիւնը: Անիկա կը նմանի արմատներուն՝ անսառնակ ժայռերու փաթթուելուն: Անիկա կը նմանի փոթորկայոյզ հողի մը Աստուծոյ փարեւուն:

Ճամբորդ մը սապէս կը պատմէ վրայէն անցած կամուրջի մը մասին, որ ջրվէժի մը վրայէն ձգուած էր. «Վարը կատաղի հոսանքներ, խորունկ ջուրեր և փրփուրներ, իսկ վերը նեղ կամուրջը որուն վրայէն գողալով կ'անցնինք: Բայց յանկարծ գեղեցիկ տեսարան մը պարզուեցաւ մեր շուրջը: Արեւի ճառագայթները փրփրացող ջուրի կաթիլներէն անցնելով բաղմերանգ ցոլքերով կը գունաղարդէին մեր շուրջը:» Այսպէս

ալ վիշտի ալիք մը տեղատարափ անձրեւի ձեւով երբ մեր վրան իջնայ, կ'ըստիպուինք անկարհկիր ճիզի յորձանքէն անցնիլ. այս բոլորը մեզի անհասկնալի գաղտնիքի մը նման կը թուի: Բայց երկնային փառքի ծիածանը պիտի տեսնենք մինչ վիշտի տարափներու մէջէն անցնինք, այն ատեն ամէն ցաւի եւ արցունքի իմաստը պիտի շմբռնենք: ԹՐԿՄ. ՏԻԿ. ԵՍԹԵՐ ԱՇՃԵԱՆ ԼՕՍ ԱՆՃԷՐՍ

ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՀՈԳԵՒՈՐ ՄԹՆՈԼՈՐՏԸ

Սուրբոյ և Լիբանանի Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան վերջացող տարեկան ժողովը, որ 21-28 Օգոստ. 1929 ին տեղի ունեցաւ Քէսապի մէջ, ընդհանուր առումով հոգեւոր գումարում մը եղած է, որուն միջոցին թէ ժողովականները և թէ ունկնդիրները հոգեւոր կերպով մեծապէս տպաւորուեցան:

1. Քարոզներ. — Ասոնց թէ նիւթերը և թէ բովանդակութիւնները կը բաղկանային հոգեւոր կեանքի մէջ զարգանալու միջոցներուն խաղաղութենէն:

Տր. Մէրիլի քարոզին նիւթն էր «Նոր Երկինք և Նոր Երկիր», որուն չորս կէտերն էին. — 1) Նոր հորիզոնի պէտք ունինք. այսօր նորահնար գիւտերով հորիզոնը կ'ընդլայնի: Քրիստոնեան Քրիստոսի մէջ նոր հորիզոններ պէտք է գտնէ: 2) Նոր միութիւն. գործիչները նոր հորիզոններու հասնելու համար պէտք է միանան: 3) Նոր տեսիլքի կարողութիւն: Մարդոց մէջ անոնց հոգիներուն մէջ գտնուող յարաբերութիւնները գտնել: 4) Նոր հնազանդութիւն. Սուրբ Հոգիի կը կարողինք, բայց հնազանդողներու միայն կը տրուի:

Մր. Րիկլի քարոզին նիւթն էր, «Հոգեւոր գործերուն մէջ մեր անյաջողութեան պատճառը ի՞նչ է:» Մատթ. 17,

18 և Ա. Կորնթ. 13: «Մենք ինչո՞ւ չկըր-
ցանք հանել:» Անցեալ տարուան ան-
լուծելի մնացած հորցերդ խորհէ, նկատի
առ այն փափաքներդ որոնց կարելի
չ'եղաւ գոհացում տալ. երկու պառճառ-
ներ կան, — հաւատքի և սիրոյ պակա-
սութիւն: Մեղքը հրամայելով մէջտե-
ղէն չ'ելլեր, այլ՝ սիրով և հաւատքով:
Երիտասարդութիւնը եկեղեցիէն կ'ու-
ժանայ, երկու դարման կայ, սիրէ՝ պա-
սոնք և հաւատա՛ Աստուծոյ:

Վեր. Ե. Հատիտեանի քարոզին
նիւթն էր «Ես ամօթ չեմ սեպեր Բրիտ-
տոսի Աւետարանը»: Հոովմ. 1.16:
Մեղքն է ամէնալիք բանը: Բրիտտոս
փրկած է, կը փրկէ, պիտի փրկէ, ին-
չո՞ւ պիտի ամէնամ: Աւետարանը պի-
տի փրկէ աշխարհը, չեմ ամէնար:

Փրօֆ. Զ. Ա. Պէզճեան, Վեր. Ն.
Սարեան, Վեր. Ե. Կէօքկէօզեան ալ
քարոզեցին: Այնպէս կը յուսանք թէ
այս բոլոր քարոզներու պատգամները
երկար առին պիտի յիշուին:

2. Ճառեր: Եղած կարգադրութիւն-
ներու համեմատ եօթը զրատը ճառեր
պատրաստուած էին: Խորհելով որ ա-
սոնք օր մը կրնան հրատարակուիլ կ'ու-
զեմ բաւականանալ յիշելով միայն ա-
նոնց նիւթերը և գորդներուն անուն-
ները:

1. Գիւղական Եկեղեցիները, Վեր.
Յկր. Շնորհօքեան:

2. Եկեղեցիներու Ելեւմտական Հար-
ցերը, Վեր. Կ. Յ. Յարութիւնեան:

3. Մեր Ընկերային Յարաբերու-
թիւնները, Փրօֆ. Զ. Ա. Պէզճեան:

4. Եկեղեցիներու մէջ Հոգեւոր
Կեանք, Տր. Ճ. Է. Մէրիլ:

5. Եկեղեցիներու փոխյարաբերու-
թիւնները, Վեր. Հ. Հ. Րիկզ:

6. Աւետարանչութիւն, Պատ. Հ.
Տարազճեան:

7. Կրթութիւն, Վեր. Տ. Անդրէաս-
եան:

3. Աղօթածողութիւնը, հոգեւոր խո-
կումներու պահերը: Այս պահերուն էր
որ Ս. Հոգին ամէնէն զգալի կերպով կը
ներգործէր և կը յայտնուէր: Ընդ-
հանրապէս Տր. Մէրիլի առաջնորդու-
թեամբ աղօթքներէ եւ վկայութիւններէ
կը բաղկանային անոնք: Հիանալի
անկեղծութիւն եւ լրջութիւն կը տի-
րէին:

1. Ի՞նչ է մեր պարտքը. ժողովին
ուղղութիւն տալու համար յիշուեցաւ
Մր. Սանաբրոնի մէկ խօսքը. «Մար-
դը կը հաւատարի իր մէջը գտնուած ա-
ռաքինութեանց նուազ իր յոռի ունա-
կութեանց»: Մեր պէտքն է սէր, Բը-
րիտտոսով եղող սէր և Բրիտտոսի պէս
ներել կարենալ:

2. «Մեծնալու Միջոցները», Տր.
Մէրիլի առաջնորդութեամբ: ա) Ս.
Գիրքը շատ և ուշադրութեամբ ուսում-
նասիրել: բ) Որոշ նիւթի մը համար
Ս. Գիրքը քննել, ուսումնասիրութիւնդ
որոշ նիւթ մը ունենայ:

3. «Մարդերու հետ խօսակցելու
կերպը». Տր. Մէրիլի առաջնորդու-
թեամբ: ա) Բրիտտոսեայ չեղողներու
հետ ինչպէ՞ս պէտք է յարաբերիլ, վը-
կայութեամբ, Գործք. 20.20: բ) Ե-
կեղեցիի մարդոց հետ ինչպէ՞ս պէտք է
յարաբերիլ, կամք և գործունէութիւն
պէտք է: Գաղափարական մը պէտք է,
կամեցողութիւն պէտք է, որ գործա-
դրուիլ պէտք է:

4. «Պատգամ ունի՞նք»: Կալ. 1.
24-28, Եփ. 3. 7-12, Ա. Կորնթ. 1.
4-8: Ամէն քարոզիչ պէտք է պատ-
գամ մը ունենայ: Պօղոս պատգամներ
ունէր, այնպիսի բաներ գործնք Աստ-
ուած անոր մէջ կատարեց և պայն հա-
մոզեց որ ուրիշներուն մէջ ալ պիտի
կատարէ:

Իշիւ թէ կարելի ըլլար և ամէն
մարդ այս աղօթածողութիւնուն մէջ ներ-
կայ գտնուէր: Այս տարուան ժողովը

նախկինները մեծապէս կը գերազանցէր իւր հոգեւոր լուրջ մթնոլորտովը:

ՅԿԻ. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

ԱՒԵՏ. ՇՍՐԺՈՒՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ամերիկարենակ եւ ուրիարենակ բարեկամներէն ոմանք քանիցս փափաք յայտնած էին որ Կիպրոսի մէջ տւեալ. գործի մասին տեղեկութիւն տամ թերթերու միջոցաւ: Այս անգամ փափաքը ունեցայ Կիպրոսի մէջ աւետարանական գործին մէկ կարճ պատմութիւնը գրել «Նոր Աւետարեւր» ի ընթերցողներուն:

Կիպրոսի մէջ աւետարանական շարժումը 41 տարի առաջ սկսած է. Ամերիկեան Բարեկարգեալ Երիցական Առաքելութիւնը (Րիֆորմ Բրէզլիթէրիւն Միշըն) որոշեց իւր գործը յառաջ տանիլ Մերսինի եւ Լաթաքիոյ մօտ դաշտի մը մէջ, երբ Թուրք կառավարութիւնը յիշեալ վայրերու մէջ իւր գաղութները փակել տուաւ: Վեր. Հէնրի Իսսու եւ Վեր. Սթիվինսըն անուն միսիօնարները իրենց ուսուցչին հետ, որ Դուալի Սաատա անուն Արաբ քրիստոնեայ մըն էր, 1888 ին Լարնաքա եկան: Առաջին տարին 20 աշակերանոց գաղութով մը գործի ձեռնարկեցին: Յաջորդ տարին աշակերտներուն թիւը 60 ի բարձրացաւ: Միւսնոյն տունն աւետարանական գործին ալ կարեւորութիւն ընծայեցին եւ Թուրքիայէն Կիպրոս ապաստանող գաղթականներուն մէջ անդերէն, յունարէն, արաբերէն եւ թուրքերէն լեզուներով քարոզութիւններ եւ Կիրակնօրեայ Դպրոցի դասաւանդութիւններ կատարեցին:

Նոյն գործը Նիկոսիոյ մէջ սկսան կատարել: Քիչ վերջը Տօքթ. Մուր անուն մէկ միսիօնարին ալ զաւրեստովը դարմանատուն մը բացուեցաւ:

Առաջին Հաղորդութիւնը 1898 ին

Լարնաքաի մէջ կատարուեցաւ, 26 անգամներու մասնակցութեամբ, որոնց 18 հատը Կիլիկիոյ Հայ Աւետ. Եկեղեցիներուն անդամներ են, 6 հատը՝ Նոր անգամ ընդունուած Հայ Բողոքականներ, իսկ երկուքը՝ Յոյն Օրթոտոքս:

Վեր. Յարութիւն Սարգիսեան, 18 Նոյ. , 1898 ին Նիկոսիոյ Եկեղեցիին կ'անդամակցի, եւ Առաքելութեան իրեն տուած պաշտօնով որոշ ատենուան մը համար Հայերու մէջ կը գործէ: Լարնաքաի եւ Նիկոսիոյ մէջ առաջին պատեհութեամբ մէյ մէկ եկեղեցական շէնքեր շինուեցան ուր կարելի եղաւ կանոնաւոր կրօնական պաշտամունք կատարել: Այս եկեղեցիները առանձնապէս ունէ ազգի մը չին պատկանիր եւ բոլոր ազգութիւններու համար բաց եղած են, բայց թէ պաշտամունքին մասնակցողներուն եւ թէ եկեղեցիի անդամներուն մեծամասնութիւնը Հայերէ բաղկացած է: Հայ Աւետարանականները, որոնք Թուրքիոյ մէջ ջարդի, տարագրութեան եւ անապահովութեան պատճառաւ Կիպրոս ապաստանած են, ստիպուած միացած են Երիցական Եկեղեցիին հետ ուրիշ Աւետ. Եկեղեցիի մը չգոյութեան պատճառաւ: Այն անհատները, որոնք Հայ. Աւետ. Եկեղեցւոյ նախկին անդամները եղած են եւ որոնց կեանքին մասին լաւ վկայուած է, առանց քննութեան եկեղեցւոյ անդամ ընդունուած են. (Մինչեւ հիմա այս կերպը կիրարկելի է:) Տարբեր ժամանակներուն մէջ Կիպրոս եկող Հայ Բողոքականները շատ քիչ բացառութեամբ Լարնաքաի եւ Նիկոսիոյ մէջ Երիցական Եկեղեցիին հետ միացած են: Ամէն տարի թէպէտ անդամներուն թիւը աւելցած է, սակայն կարծելով որ Թուրքիա խաղաղած է կամ գործի եւ շահի անբաւարարութեան պատճառաւ շատ մը Հայեր կղզիէն հեռացած են եւ հեռեւեար անոնց թիւը մեծապէս նուազած է: Այսու հանդերձ Խղիւս քաղաքներուն մէջ

ալ 20-25 տարիէ ի վեր ապրող անդամներ կան :

Վերոյիշեալ երեք միութեաները երբ իրենց հայրենիքը կը վերադառնան, անոնց տեղը զբաւելու համար Վեր. Մագպարօլ և Տոքթ. Մագգարօլ անուն երկու եղբայրներ Ամերիկայէն Կիպլոս կուգան : Վեր. Մագգարօլ կ'ստանձնէ եկեղեցական և դպրոցական դործերը, իսկ Տոքթ. Մագգարօլ՝ դարմանատունի պատասխանատուութիւնը : Վեր. Մագպարօլ իր հայրենիքը վերադարձիր է 14 տարի աշխատելէ վերջ, իսկ եղբայրը իր բժշկական գոյժը կը շարունակէ Նիկոսիոյ մէջ :

Կիպրոս հասնելէս վերջ առաջին քարոյս տուի 4 Յուլիս, 1920 ին, Լարնաքաւ եկեղեցիին մէջ : Այն ատեն Լարնաքաւ և Նիկոսիոյ եկեղեցիներուն մէջ հաստատուած 45 ի մօտ Հայ Աւետ. եկեղեցիի նախկին անդամները կային : Այդ ատենուան հովիւն էր Վեր. Ալվին Սմիթն անուն միութեամբ, որ Լարնաքաւ մէջ հաստատուած էր և իր հեղինոյթովն ու բարեպաշտ կեանքովը բոլորէն կը սիրուէր : Անիկայ իրապէս Աստուծոյ մէկ զաւակնէր որ մասնաւորապէս Հայերու հանդէպ կարեկցութիւն կը տածէր և անոնց համակրանքը շահած էր :

Վեր. Սմիթն անգլերէն կը քարոզէր որ Յոյներուն համար յունարէնի և Հայերուն համար հայերէնի կը թարգմանուէր : Սակայն 4 Յուլիս, 1920 էն ըսկոնալ անգլերէն հասկողներուն անգլերէն, Յոյներուն համար յունարէն և Հայերուն համար թուրքերէն լեզուներով քարոզ և պաշտամունք կատարելու համար կարգադրութիւններ եղան :

Նիկոսիոյ եկեղեցիին հոգեւոր գործիչէ զուրկ ըլլալով կիրականօրեայ պաշտամունքը հոն Տոքթ. Սամուէլ Մուրատեանի կողմէ կը կատարուէր : Վեր. Սմիթն և ստորագրեալս ամիսը մէկ մէկ

անգամ Նիկոսիա երթալով կը քարոզէինք : Այս միջոցին Ֆրանսացիներու կողմանէ Կիլիկիոյ պարպումը տեղի ունեցաւ որուն իբր արդիւնքը մի քանի հազար Հայեր Կիպրոս եկան, անոնց մէջ բաւական թիւով Հայ Աւետ. ներալ կը գտնուէին, որոնք երկու քաղաքներու եկեղեցիներուն մէջ ժողովուրդին թիւը շատցուցին : Միւսնոյն ատեն Վեր. Յարութիւն Մանուշակեան ալ Ատանայէն հոս հասնելով Նիկոսիոյ եկեղեցիին մէջ երեք տարի չափ կը գործէ : Վեր. Սմիթն 1922 ին Ամերիկա մեկնեցաւ իր առողջութեան խանգարման պատճառաւ : Անոր տեղը 1925ին Վեր. Քէսքի իբր միութեամբ հովիւ Ամերիկայէն դալով Նիկոսիոյ մէջ հաստատուեցաւ, ուր Հայերու մէջ իր հոգեւոր պաշտամունքը թարգմանի միջոցաւ կը շարունակէ կատարել : Տոքթ. Սամուէլ Մուրատեան մեծ ծառայութիւն մատուցած է քարոզները տաճկերէնի թարգմանելու մէջ : Ստորագրեալս ամիսը մէկ երկու անգամ Նիկոսիան այցելելով կը շարունակէ տաճկերէն լեզուով քարոզներ տալու : Վերջին հինգ տարուան միջոցին 100 էն աւելի Հայ Աւետ. ներ կղզիէն մեկնած են :

Մինչև 1926 ին վերջը գոթէ միութեաներն էին որ Կիպրոսի եկեղեցական գործերը կը վարէին : Բայց 2 Յունվ. 1927 ին Լարնաքաւ մէջ և 9 Յունվ., 1929 ին Նիկոսիոյ մէջ անդամներու կողմանէ գաղտնի քուէարկութեամբ, Ամերիկացիներէ, Յոյներէ և Հայերէ բաղկացեալ եկեղեցական ժողովներ և սարկաւազներ ընտրուեցան, և եկեղեցական գործերը սկսան խառն ժողովներու կողմանէ կատարուիլ :

Ներկայիս բոլոր կղզիին մէջ գտնուող Հայ Աւետարանականներուն թիւն է 283, որուն 112 ը Լարնաքաւ մէջ, 147 ը Նիկոսիոյ մէջ 19 Ամիանթօսի մէջ, իսկ հինգը Ֆամակութալի մէջ կը գտնուին :

Լարնաքաւի Եկեղեցիին անդամներուն թիւն է 60, որուն 45ը հայ, 11ը Յոյն և չորսը Ամերիկացի են: Նիկոսիոյ Եկեղեցիին անդամներուն թիւն է 52, որուն 40ը Հայ, զեցը Յոյն և զեցը Ամերիկացի են: Ասկէ կը հասկցուի թէ 283 Հայ Աւետ. ներուն ԷՏը եկեղեցական անդամներ են: Անոնց մէջ գատ, Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցիին պատկանող մի քանի անդամներ կան, որոնք կարգ մը պատճառներով թէպէտ չեն միացած Կիպրոսի Եկեղեցիներուն հետ սակայն կանոնաւոր կերպով կը յաճախեն եկեղեցւոյ պաշտամունքներուն:

Լարնաքաւի Հայ Աւետ. Ժողովուրդը զպրոց մ'ունի 20 աշակերտներով յանձնուած հրեք ուսուցիչներու խնամքին: Մինչև հիմա իբր զպրոցի շէնք կը գործածուէր եկեղեցիի սրահը: Բայց նկատելով որ մանուկներուն առողջութեան վնասակար է այդ սրահը, այս տարի որոշուած է ձեռնարկել 300 ոսկի ծախքով դպրոցական շէնքի մը կառուցումը: Այն շէնքը միևնոյն ատեն պիտի գործածուի կիրականորէս զպրոցներու համար ալ: Այս գումարին 150 ոսկին ժողովուրդին կողմանէ պիտի վճարուի երեք տարուան միջոցին, մնացեալ 150 ոսկին համար ալ գուրսը գանուող եկեղեցասէր և դպրոցասէր բարեկամներուն օգնութեան կը յուսան: Կը յուսանք թէ մեր ազգակիցներէն շատերը իրենց նուէրներով պիտի յիշեն իրենց դպրոցական եղբայրները:

Լարնաքաւի մէջ առաքելութեան պատկանող միջազգային բարձրագոյն վարժարան մը կայ որ ասկէ 19 տարի առաջ հաստատուած է և կը կոչուի «Ամերիկեան Ակադեմիա»: Դպրոցի ուսուցչական կազմը կը բաղկանայ 12 անդամներէ և աշակերտութեան թիւն է աւելի քան 200, որուն 63ը գիշերօթիկ և 50ը Հայեր են: Դպրոցին տնօրէնն է Մը. Ուիլյ, որ կարող վարիչ մը

և ուսուցիչ մըն է: 919 տարուան միջոցին դպրոցի ուսումնաւարտներուն թիւը եղած է 161, որուն 66ը Յոյն, յիսունը Հայ, 29ը Թուրք, 9ը Արաբ, չորսը Ամերիկացի, մէկը Անգլիացի, մէկը Ասորի և մէկը Հրեայ եղած է: Ուսումնաւարտները Պէյրութի Ամերիկեան Գոլէճին Փրէշմէն կարգին կ'ընդունուին առանց քննութեան: Այս տարի դպրոցին ազնկանց բաժին մ'ալ պիտի աւելցուի գատ շէնքի մը մէջ: Հայ դպրոցական մանուկները մեծապէս կ'օգտուին այս դպրոցէն:

Նիկոսիոյ մէջ զԺբազդաբար Հայ Աւետ. համայնքը զուրկ է իր սեպհական զպրոցէն տնտեսական նեղութեան պատճառաւ, և իր մանուկները կը զրկէ Հայ Առաք. համայնքին զպրոցին: Երիցական Առաքելութիւնը ութ տարի առաջ ազնկանց համար բարձրագոյն վարժարան մը հիմնած է, ներկայիս աւտոր աշակերտութեան թիւն է մօտաւորապէս 75, որուն մեծամասնութիւնը Հայերէ կը բաղկանայ: Տոքթ. Մագլարօլի դարմանատունը մեծ ծառայութիւն կը մատուցանէ հոս, ձրիօրէն դարմանելով շատ մը Հայ աղքատ հիւանդները և յաճախ ձրիօրէն տալով պէտք եղած դեղերը: Մեր գաղթական ազգակիցները ահա այսպէս կ'օգտուին Տոքթ. Մագլարօլի գաղտուն և անձնուէր հոգիէն:

Կիպրոս Հայերու համար հիւրանոց մը եղած է և ոչ թէ հայրենիք մը. հետեաբար եկեղեցիներուն ժողովուրդին և անդամներուն թիւը չէ բաղմայած. բայց իբր մէկ մէկ պգտիկ փարոսներ Աւետարանի պատգամը աւետած են տարբեր ժամանակամիջոցներուն եկող ու անցնող Հայերուն: Հիմա ալ եկեղեցիներու պաշտօնը ասկէ տարբեր բան մը չէ: Այս կարեւոր գործին մէջ հաւատարմ և ջերմեռանդ կարեւոր ըլլալու համար հոգեւոր ոյժի և խմաստութեան

պէտքը կ'զգացուի: Բոլոր Աստուծոյ
Թագաւորութիւնը սիրողներէն կը խընդ-
րուի աղօթիկ մեզի համար:
Լարնախոս Ս. Կ. ԱՂՊԱՊԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԻՆՉՊԷՍ ԿՍՐԵԼԻ Է ՄԵՆՇ ՊԱՏԿԵՐ ՄԸ
ՆԿՍՐԵԼ

Օր մը եկեղեցական մը մինչ գեղեցիկ
պատկեր մը կը դիտէր մեծ հիացումով,
իր քովը կայնող բարեկամին ըսաւ. «Ե-
թէ երանգապնակը ե վրձինը ինծի տա-
լին ես երբէք զաղափարն իսկ չպիտի
ունենայի այսպիսի գործ մը սկսելու հա-
մար:» Բարեկամը այսպէս պատասխա-
նեց. «Ենթադրէ որ նշանաւոր արուես-
տագէտը քեզի զաւով հարցնէ թէ կ'ու-
զե՞ս այս նկարը ընդօրինակել եւ յայտ-
նէ թէ ինք քեզի պիտի տայ իր արուես-
տագէտի հոգին, թէ քու ձեռքդ չէ որ
վրձինը պիտի բռնէ, երանգները պիտի
պատրաստէ, այլ արուեստագէտի հոգին
է որ պիտի կատարէ: Այն ատեն ի՞նչ
պիտի պատահի, ինչ որ առաջ անկարելի
էր հիմա կարելի եղած պիտի ըլլայ,
քանզի տաղանդը պիտի միանայ տկա-
րութեան:»

Քրիստոսի պատկերը կրնանք վեր-
արտադրել մեր կեանքին մէջ երբ անոր
հոգին ունենանք:

ԶԳՈՂՈՒԹԻՒՆ ՆԻ ՍՍԻՍՏՈՆԱԿ

Վտնուած չէ մէկը որ կրցած ըլլայ
ձեռքով իմանալ յաղթել: Այսուհան-
դերձ մարդ մը սաւառնակի մեքենան
շարժումի մէջ կը գնէ, կը հեծնայ եւ կը
բարձրանայ: Զգողութեան ոյժը չկոր-
սուեցաւ, ան տակաւին կ'աղղէ իր բո-
ւր ոյժովը. բայց գործող մեքենային
ոյժն է որ անկումէ գերծ կը պահէ սաւառ-
նակը. բայց երբ մեքենան դադրի զոր-

ծելէ՝ անկումը անխուսափելի է: Նմա-
նապէս այն անհատը որուն մէջ Քրիստոս
չկայ, չի կրնար բարձրանալ, եւ եթէ
բարձրացած է չի կրնար հոն մնալ, ան-
կումը անխուսափելի է:

ՔՐԻՇՆԱՆ ԿԸ ՓՐԿԷ

Հնդկաստանի մէջ տեղ մը, քրիստոն-
եաներու մէկ կրօնական հաւաքոյթին
մէջ, Պրահման մը ուշադրութեամբ ա-
նոնց ըրած վկայութիւններուն մօտիկ
ընելէ վերջ ըսաւ. «Դուք կըսէք թէ մենք
փրկուած ենք. ինչպէս որ Քրիստոս ձեզ
փրկած է նոյնպէս ալ Քրիշնան զիս ա-
զատած է:» Հաւաքոյթը վարող մարդը
անմիջապէս ըսաւ. «Շատ ուրախ եմ
զայն լսելուն համար հիմա մենք ստորին
դասակարգէ մ'արդոյ թաղերը կ'երթանք
անոնց օգնելու համար. կ'ուզէ՞ք մեզի
ընկերանալ:» Պրահմանը վայրկեան մը
լռելէ վերջ ըսաւ. «Տէր, ես փրկուած եմ
բայց ոչ այդ աստիճան:»

Դուն ո՞ր աստիճան փրկուած ես:
Յիսուս է կատարեալ եւ ճշմարիտ Փրկ-
իչը:

ԱՐՁԱԳԱՆԳ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԻ
ՔԱՂԱՔԱԿՐԹԻԹԻՒՆ

Ներկայ քաղաքակրթութիւնը կամ
յառաջդիմութիւնը շատ բան կը պարտի
զիտական աշխարհի մէջ կատարուած
նորահնար գիւտերուն, որոնք մեր
կեանքին հորիզոնը կը շարունակեն ըն-
դարձակել: Բայց այն գիտական տե-
սութիւնները, որոնք տեւական փոփո-
խութեան ենթակայ եւ վերջնական ճշ-
մարտութիւն ըլլալու հանգամանքէն
չուրկ կարծիքներ են, կրօնական ըմ-
բռնումներու եւ բարոյական ընթաց-
քին վրայ յաճախ աւերիչ ազդեցութիւն-

ներ առնեցած են: Նրա թին կազմութեան, տիեզերքը վարող ոյժին, մարդկային ծագումին եւ նախամարդուն հաւանական վիճակին, եւայլնի մասին վերջին 50 մանաւանդ 20 տարիներէ ի վեր գիտունները իրենց կարծիքները միշտ փոխած եւ շատ անգամ իրարու հակառական կարծիքներ յայտնած են: Շատ մը մարդիկ, որոնք այս փէս ճշմարտութիւնները կամ ան ճշմարտութիւնները իրր վերջնական ճշմարտութիւններ ընդունած են, նոր կարծիքի մը երեւոյթովը իրենց մտաւորական եւ հոգեբարոյական կեանքը անհղ ցնցումի եւ կամ քաշաքամի ենթարկելու վտանգին մէջ զրտնոտած են: «Իլլւսթրէյթըթ Լօնտըն Նիւզ» ինչառաւոր խմբագիրը, Չէսթըրթըն, «Լիթըրէրի ծայճէսթ» ի մէջ արտասպառած յօդուածով մը կ'անդրադառնայ այս խնդրին, եւ իրեն յատուկ զօրաւոր եւ քիչ մըն ալ խայթող երզլածալիր լեզուովը կը յայտնէ թէ կարելի չէ այս խախտաւ եւ միշտ փոփոխական զիտական կարծիքներու վրայ բարոյաւորութիւն մը հիմնել եւ քաղաքակրթութիւն մը կերտել:

ԱԶԴՈՒ ԿՐԾՆՔ

Ինչպիսի՞ կրօնք մը կրնայ ազգիլ մեր այսօրուան տեսած անհոգ, անողորմութեան մէջ խաբխափող, քառային վիճակի մատնուած անհատներուն եւ բազմութիւններուն վրայ: Տը. Մըլինզ այս մասին իր մէկ ճառին մէջ սապէս արտաւայտուած է:

«Դուք ձեր միտքին ձեւը չէք կրնար ապաւորել ձեր ժողովուրդին վրայ, մինչեւ որ դուք միտքի ձեւ մը չունենաք:

Աներկայիս, զիտութեան եւ կրօնքի միջեւ դառնում հակառակութեան պատճառը շատ մը եկեղեցականներու զարգացումը դադարի ենթարկուած է:

— Անոնք որոշ տեսակէտներ չունին:

— Անոնք ժխտական վիճակի մը մէջ են:

«Դուք գիտէ՞ք թէ կրօնական յաւաքղիմութեան մեծ շրջանները զօրաւոր համոզումներու պահեր եղած են: Հիմայ եւ վարդապետական մասնաւոր մէկ ցրութեան մասին չեմ խօսիր, դուք կրնաք ձեր ուզած վարդապետական սեէ տեսակէտը ընդունիլ, բայց դուք զանոնք պէտք է ըմբռնէք այնչափ յատուկօրէն, այնչափ զօրաւոր կերպով եւ այնչափ մեծ խանդով որ կարենաք զանոնք ապաւորելուէ անհատի մը վրայ»:

Բանտի մը վանդակապատին մէջէն երկու մարդիկ զուրս նայեցան, մէկը տեսաւ ցիխը իսկ միւսը՝ աստղերը:

ԹՈՉՈՂ ՀՈՂԱՆԱՂԱՅԻՐ

Օղային ճամբորդութեան մէջ նոր դարապլուս մը սկսած է Ժուան տը լա Չիէրվա անուն Սպանիացի մեքենագէտի մը նոր հնարած թռչող մեքենայովը: Այս մեքենան կը կոչուի օթօգիօ (autogiro), որ ամէն կերպով սաւառնակի կը նմանի միայն թէ անոր թևերուն տեղ եւ անոնց պաշտօնը կատարելու համար ճիշդ քառաթեւ հողմաղացքի նմանող րօթօր (թաւաղող) անուն գործիք մը ունի, որ մեքենային ճիշդ կիզդոնէն վեր բարձրացող պողպատէ կայմի մը դադաթը զրուած է: Այս քառաթեւ րօթօրը 140 թաւալումներ կունենայ մէկ վայրկեանի մէջ, որ սովորական յառաջամուղ շարժիչի արագութեան մէկ տասնորդն է մօտաւորապէս:

Սաւառնակը երեք մեծ անպատահութիւններ ունի: 1) Բարձրանալու եւ գետին իջնելու համար շատ ընդարձակ տեղի պէտք ունի: 2) Վայրէջքը շատ արագ է, որ անհաճելի է: 3) Չի կրնար ինքզինքը հողալ երբ վարիչը անկառօն թիւան կը մատնուի ու եւ է կերպով:

Օթօգիօն այս երեք թերութիւնք

ներէն գրեթէ ազատ է։ Սովորական քեֆիս խաղալու գետինը, 200 քառ. մէթըր, կը բաւէ օգը ելլելու կամ վար իջնալու համար։ Էն արագաշարժ ճեպընթացէն միայն քիչ մը աւելի արագ կը թռչի։ Գետնէն 15 ոտք բարձրէն կրնայ թռչիլ, քիչ մը կրնայ առկախ մնալ օդին մէջ, ապա յանկարծ վեր բարձրանալ ուղղահայեաց կերպով։ Առանց վարիչի օգնութեան գրեթէ կրնայ գետին իջնալ, ճիշդ անկարգելի նման։ Օթօճիրօ մը 1500 ոտք վերէն վար ձգուեցաւ գրեթէ առանց վնասուելու։

Օթօճիրօ վ թռչիլ շատ դիւրին է, կըստ թէ միքանի ժամուան մէջ մէկը կրնայ անով թռչիլ սորվիլ։ Սաւառնակի ենթարկուած մշուշի վտանգէն ազատ է ան, քանզի շատ ցածէն կրնայ թռչիլ և իջնալու համար յարմար գետին մը դիւրութեամբ գտնել։ Օթօճիրօն քիչ վերջը պիտի զրաւէ, կըսեն, ինքնաշարժի (օթօ) տեղը, և իր գործատեղին գացող մարդը իր տան տանիքը պիտի ելլէ իր օթօճիրօն հեծնելով իր տեղը հասնելու համար։ Սաւառնակը տակաւին պիտի գործածուի երկար ճամբորդութիւններու և մեծ ծանկութիւններ փոխադրելու համար։

The North Amerekan Review

ՃԻՄԻ ԵՔՆ

Վերազարթնող Չինաստանի ներկայ զարգացման մեծ ազդակներէն մէկն է Ե. Ճ. Եէն, որուն նախահայրերէն մէկը, ասկէ 80 սերունդ առաջ անձամբ ծանօթացած էր Գօնֆուկիոսի, որ զայն գոված էր լսելով անոր մասին թէ «ան ճշմարիտ բարեկազութեան իմաստը կը հասկնայ»։

Եէն ընտանիքը նիւթապէս միշտ ազգատ բայց զիրքերով հարուստ եղած է։ Ճիմի Եէն 1918ին Եէյլի մէջ ուսանող եղած ատեն հրաւէր ստացաւ Քըրօնսայի մէջ ռազմազաւտի վրայ իր

բանուր գործող 200,000 Չինացիներուն մէջ գործելու համար։ Այս խեղճ և կարօտախտով տառապող Չինացիները, որոնք անկարող էին իրենց հայրենիքին մասին ո եւ է բան մը կարգալու, զըրգիւ մը եղան իր ժողովուրդին մեծագոյն պէտքին մասին խորհելու եւ ճարմը գտնելու։ Ճիմի Եէն անմիջապէս սկսաւ խրամներու մէջ այս մարդոց զըրել կարգալ սորվեցնել չինարէն լեզուով, և սկսաւ հրատարակել շաբաթաթերթ մը ժողովրդային լեզուով։ Յաջողութիւնը անմիջական եւ սքանչելի եղաւ, որ զինքը զրդեց անզրապէտ զանգուածներու դաստիարակութեան գործին։

Թաջորդ տարին երբ Չինաստան եկաւ, սկսաւ կտգմակերպել կամաւոր ուսուցիչներու բանակ մը հասարակ ժողովուրդին գրել կարգալ սորվեցնելու համար։ Փողոցի անկիւնները, խանութները, ծառերուն տակը, գործարաններուն խորշերը, տուները, վերջապէս ամէն տեղ ուր սորվեցնել կարելի էր, դպրոցի մը վերածուեցաւ։ Կատարուած առաջին փորձին 1400 մարդիկ իրր աշակերտ արձանագրուեցան, որոնցմէ 1200ը 80 ուսուցիչներու ղեկավարութեան տակ մինչեւ վերջը շարունակեցին եւ համարձակութիւնը ունեցան քննութիւն տալու։ Ասոնցմէ 967ը յաջողեցան, և «գրագէտ քաղաքացի» ի վկայականը առին։

Զանգուածային դաստիարակութեան շարժումը մեծապէս ծաւալեցաւ բոլոր Չինաստանի մէջ, այնպէս որ անցեալ տարի ուսանողներու թիւը հասաւ 4.5 միլիօնի իսկ ուսուցիչներունը 100,000ի, որուն մէջ կը գտնուին նաեւ երկու համալսարնականներ՝ վարդապետ փիլիսոփայութեան (PH. D) արտղոսով։ Ահա թէ ինչպէս սկսած է շարժիլ Մոնկոլ վիթխարի զանգուածը։

The Century Magazineէն

ԵՌԻԹՈՊԻԱ ԳՈՒԼԵՃ

Ներկայ կրթական ունեւ մէկ հաստատութիւնը թերի նկատելով աւելի հիմնական կատարեալ ուսում մը տալու համար կարգ մը մարդիկ ծրագրած են Եռութեան անուն նոր Գուլէճ մը հիմնել, որուն մասին կը կարդանք։—

Այս Գուլէճին նպատակն է «իր աշակերտներուն պատահութիւն տալ իրենք գիրենք զարգացնելու համար։ Կրթութիւնը ուրիշ բան չէ այլ միայն ուսանողին առիթ մը տալ ներսէն մեծնալու համար։ Կրթութեամբ անհատ մը գլխաւորապէս կը զանազանուի իր այն կարողութեամբը, որով նոր և անսովոր պարագաներու տակ ուշիմութեամբ կը գործէ, այս նպատակաւ ուսանողը պէտք է ծանօթանայ մարդկութեան անցեալ փորձառութիւններուն և պէտք է իրապէս ըմբռնէ բոլոր պայմանները որոնք ներկայ քաղաքակրթութեան մէջ կեանքի ուղղութիւն և ձեւ կուտան։ «Եռութեան» աւելի նկատի պիտի առնէ ապրելու արուեստը քան թէ ապրուստ ճարելու կարողութիւնը։»

Բոլոր աշակերտները թոշակաւոր պիտի ըլլան, նոյն իսկ աղքատները պէտք է անպայման թոշակին կէտը վճարեն։ Բոլոր աշակերտները, նպաստընկալ և ուրիշ ունեւ մէկ աշակերտ, դպրոցական դրաղումներէ ուրիշ և ոչ մէկ զործով չպիտի զբաղին, իրենց բոլոր ժամանակը պիտի տան ուսումնասիրութեան։

Ուսուցման կերպը երկու մասնաւոր յատկանիշեր պիտի ունենայ... 1) Ուսուցումը սովորականէն աւելի անձնական պիտի ըլլայ. այսինքն ուսանողները՝ իրաքանչիւրը 4-5 անդամէ բաղկացեալ խումբերու պիտի բաժնուին, այս խումբերու մէջ աշակերտը իր պատրաստած գրաւոր ճառը պիտի կարգայ և ապա մէկ կամ երկու փրոֆէսորներու առաջնորդութեամբ խորհրդակցութիւն-

ներ պիտի կատարուին։ 2) Ուսուցման հիմը պիտի կազմեն ուսուցանելիք ճիւղին սկզբունքները և օրէնքները քան թէ անոր անշատ իրողութիւնները։ Այս Գուլէճին մէջ տիրող սկզբունքը պիտի ըլլայ սա՝ գաղափարը թէ կրթութեան մէջ մեծագոյն ազդակը ուսանողն է։ Իւրաքանչիւր աշակերտ իր դասընթացքը պիտի աւարտէ իր նախատրած նիւթին մասին լաւ ուսումնասիրութիւն մը պատրաստելով, առանց փրոֆէսորնելու աջակցութեան։

The Outlook and the Independent էն

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԻՌԻԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Սուրբոյ և Լիբանանի Հայ Աւետ. Եկեղեցիներու միութեան տարեկան Ժողովը այս տարի գումարուեցաւ Սպոստ. 21-28ին, Քէսապի մէջ, Գաւրուս Լիբան (Ճէպէլ Ազրա) ստորոտը։ 38 ներկայացուցիչներ, որոնցմէ 19 հատը հովիւներէ ու քարոզիչներէ կը բաղկանար, կը հերկայացնէին 20ի չափ եկեղեցիները և Պօրտի միսիոնարութիւնը։ Բոլոր պատուիրակները հիւրընկալուեցան գիւղացիներու կողմանէ, որոնք թէպէտ աղքատ բայց առատաձեռն և հիւրասէր բնոյթով մը օժտուած են։

Ժողովը իր նիստերը գումարեց Քէսապի Հայ Աւետ. դպրոցի օդատուն սրահին մէջ որ կը ծառայէ նաև իբր աղօթարան քանզի հին եկեղեցին քանդուած է և հանգուցեալ վեր. Տ. Գունտադճեանի ձեռնարկած հոյակապ եկեղեցական շէնքը տակաւին կը մնայ կիսաւարտ։ Համաժողովին կը նախագահէր Փրոֆ. Զ. Ա. Պէյճեան, որուն աշակերտած էր ներկաներուն մեծամասնութիւնը, որով ժողովասրահը դասարանի մը հանդամանքն կ'ստանար իր բնին, և խորհրդակցութիւնները աւելի մտերմական և ոչ պաշտօնական կը դառնային։

Միութիւնը երկու անգամ կէսօրուան ճաշի հրաւիրուեցաւ երկու տարրեր գիւղերու կկեղեցիներուն կողմանէ. ժողովը իր մէկ օրուան նիստերը Գալա-տուրանի մէջ կատարեց, որուն ժողովուրդը ամենաաղքատն է բոլոր այս գիւղախումբին մէջ: Էջմիշ-Օլուզի մէջ Միութեան բոլոր անդամները և գիւղացիները լուսահոգի վեր. Յ. Էսքիճեանի ժամանակ շինուած, բայց ձեղունը չծածկուած, փոքր բայց գեղեցիկ եկեղեցին մէջ հաւաքուեցան և միասին երգեցին փառաբանութեան երգը. քաջալերական կարճ յորգորներ եղան և ազօթքներ մատուցուեցան. բոլոր ներկաները հոգեւոր ներշնչումներով տոգորուած էին:

Ժողովներու մէջ կարգացուեցան եօթը ճառեր կարեւոր նիւթերու շուրջ, որոնց մասին եղան լուրջ խորհրդակցութիւններ, իւրաքանչիւր նիստին մէջտեղ, դադարէն անմիջապէս վերջ ազօթաժողովներ եղան և ամէն իրիկուն քարոյ մը տրուեցաւ, որուն ներկայ կը գտնուէր մեծ ժողովուրդ մը: Կիրակի օրը, Օգոս. 25 ին կատարուեցաւ Ս. Հաղորդութիւն:

Ժողովը կարգ մը կարեւոր որոշումներ տուաւ որուն ընդհանուր մէկ ամփոփումը կը յուսանք տալ: Բոլոր ժողովականները իրենց տեղերը մեկնեցան, տանելով իրենց հետ Քէսապի գով օդին կազդուրիչ տպաւորութիւնը, և ժողովներուն ներշնչող ազդեցութիւնը, իրենց սիրտը երախտագիտութեամբ լեցուն ըլլալով հիւրընկալ ժողովուրդին հանդէպ:

ՆՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ «ՄԻՈՒԼ ԱՎ ԲՈՒԺԸՆ» Ի ՀԱՄԱՐ

Սուրիայէն Պ. Պ. Նշան Տօնիկեան, Վահրամ Սալիպեան, Միհրան Քէօրօղլուեան Աթէնք կ'երթան «Սքուլ ափ Բիլիճըն» ի մէջ ուսում առնելու համար:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքներուն Չարս Տիֆլուսի գրուածներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԼԻԻ ՈՂԻՆ

Մարլի խօսքը շարունակելով ըսաւ. — մինչեւ անգամ ես իմ փափաքած բաներս չեմ կրնար ըսել քեզի, քու քովդ խիստ կարճ ժամանակ մը ունիմ, այնուհետեւ պէտք է մեկնիմ, ես ուէ տեղ մը չեմ կրնար կենալ, չեմ կրնար հանգստանալ: Մտիկընէ, Սքրուճ, իմ հոգիս վաճառատունէն զուրս բնաւ չէր ելած, աշխարհի վրայ իմ ապրած ատենս իմ հոգիս մեր դրամարկին քովէն հեռացած չէր, ահ, աւա՜ղ, այս պատճառաւ երկա՛ր ու տաժանելի մղոններ ունիմ ճամբորդելիք, առ ի՛նչ անտանելի տանջանք է:

Սքրուճ սովոր էր իր շատ մտազբաղ եղած ատեն ձեռքերը տափառին գրպանները խոթել. հիմայ ճիշդ նոյնը ըրաւ առանց իր աչքերը վեր բարձրացնելու «Կ'երեւի թէ շատ դանդաղ կը ճամբորդես», յարեց Սքրուճ, առետրականի մը հաշուելակերպով, թէ եւ իր ձայնին մէջ խոնարհութիւն մը կը նշմարուէր:

— Ինչպե՛ղ, կրկնեց ոգին:

«Եթէր տարի առաջ մեռած ես ու անկէ ի վեր անդադա՛ր կը ճամբորդես», հարցուց Սքրուճ մտազբաղ դէմքով մը:

— Անդադար, ըսաւ ոգին, ոչ հանգիստ, ոչ կենալ, և զղջումի շարունակական տանջանքն ալ միասին կը տանիմ ուր որ երթամ:

«Շատ արագ կը ճամբորդե՞ս», ըսաւ Սքրուճ:

— Հովին թեւերուն վրայ, պատասխանեց ոգին:

«Ուրեմն այս եօթը տարուան մէջ շատ տեղեր ճամբորդած ըլլալու ես», ըսաւ Սքրուճ:

Ասոր Վրայ ոգին անգամ մ'ես աղա-
ղակեց, ու գիշերուան ննջող լռութիւնը
խորտակեց իր շղթաները անուշիւթէն ի-
րարու զարնելով:

«Բայց դուն առուտուրի մէջ լաւ
մարդ էիր, Մարլի» կակապեց Սքրուճ,
«քու գործերուդ մէջ պարկեշտ էիր:»
— Գործե՛ր, գոչեց ոգին, ձեռքերը գալա-
րելով դարձեալ. իմ գործս մարդկութիւնն
էր. իմ գործս հասարակաց բարիք ընելն
էր սէր, գութ, զոհողութիւն, բարեգոր-
ծութիւն, ասոնք էին իմ գործերս: Ու
ես ասոնք չըրի, առուտուրի ետեւէն ին-
կայ, առուտուրի՝ որ իմ պարտականու-
թիւններուս ուղիւնսն էր հետ բաղդա-
տելով լոկ մէկ կաթիլ ջուրի չափ արժէք
իսկ չունէր:

Ու անգամ մ'ես բռնեց իր շղթան ու
զայն մէկ շառաչմամբ գետինը զարկաւ,
որպէս թէ իր անտանելի չարչարանքին
պատճառը ան եղած ըլլար:

— Մանաւանդ տարուան այս ատենը,
ըսաւ ոգին, ամէնէն շատ կը չարչարուիմ:
Ինչո՞ւ մարդոց բազմութեան մէջէն կը
անցնէի Ծնունդի օրերը, ու աչքս գետինը
կը տնկէի, ինչո՞ւ գոնէ անգամ մ'ալ
աչքս չը վերցուցի զիպի այն օրհնալ
Աստղը՝ որ մոգերը աղքատիկ մսուրին
քով առաջնորդեց: Միթէ աղքատ խըր-
ճիթներ չկայի՞ն, ուր կրնայի ես ալ ա-
ռաջնորդուիլ միեւնոյն աստղին լոյսովը:

Խօսակցութեան այս ընթացքը Սքրու-
ճի համար իսկապէս յուսահատ կերպաւ
բանք մը կ'ստանար, ան խիստ կը վախ-
նար ու շարունակ կը դողար:

— Մտիկ ըրէ, գոչեց ոգին, իմ ժամանա-
կըս լմնցաւ:

«Մտիկ կ'ընեմ, խօսէ,» ըսաւ Սք-
րուճ, «բայց կ'աղաչեմ, իմ վրաս այն-
քան մի ծանրանար:»

— Ինչպէս կ'ըլլայ որ քու տեսնելիք
կերպարանքովդ այժմ քու գէմդ կը կե-
նամ, ասիկայ չեմ կրնար քեզի ըսել,
չառ օրեր արդէն քու քովդ նստած եմ

անտեսանելի վիճակի մէջ:

Ասիկա Սքրուճի հաճելի բան մը չէր,
անիկա սարսափած ճակտին քրտինքը
սրբեց:

— Իմ պատիժիս մի ծանր մասն ալ այդ
է, չարունակեց ոգին: Այս գիշեր հոս
եկայ քեզի ազդարարելու թէ տակաւին
դուն պատեհութիւն ունիս և կրնաս յու-
սալ որ իմ վիճակէս ազատիս:

«Միշտ իմ ամենալաւ բարեկամս ե-
ղած ես, չնորհակալ եմ,» ըսաւ Սքրուճ:
— Երեք ոգիներ քեզի ալցի: Ես ան պի-
տի գան, շարունակեց:

Սքրուճի դէմքը մթազն.

«Միթէ ըսած պատեհութիւնս,» յ-
սող ա՛յդ է, Մարլի,» հարցուց Սքրուճ
դուզողուն ծայնով մը:

— Այո՛:

«Երա... Երանի՛ թէ... չայցելէին»,
ըսաւ Սքրուճ:

— Առանց անոնց այցելութեան չես կըր-
նար իմ ինկած վիճակէս ազատիլ, ըսաւ
ոգին, առաջին ոգին պիտի գայ վաղը
ժամը ճիշդ մէկին, միտքդ պահէ:

«Կարելի չէ՞ որ երեքը միասին գան,
ու մէկ անգամէն ազատիմ, մարլի», թե-
լադրեց Սքրուճ:

— Երկրորդին սպասէ եկրորդ գիշե-
րը, երբ ժամացոյցին տասներկու գար-
նելուն թրթռումները զադարին:

Այ մի ջանար զիս տեսնել. և քու
օգտիդ համար նայէ որ միտքդ պահես
ինչ որ այսօր տեսար ու լսեցիր ինձմէ:

Այս ըսելով ոգին սեղանին վրայէն
իր ճերմակ փաթթոյը առաւ, առաջուան
պէս անով զլուխը կապեց: Սքրուճ
լսեց անոր աղաներուն իրարու զար-
նուելու ծայնը, երբ ոգին կապը կը կա-
պէր:

(Շարունակելի) (8)

صاحب الامتياز و مدير المسئول

قسيس قردت هاروتونيان